Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՏ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՈՒՄ

Նոյեմբերի 24-ին Պատրիարքական աթոռանիստ Սուրբ Դանիելյան վանքում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների միջև տեղի ունեցավ եռակողմ հանդիպում, որին մասնակցեցին Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ-ն և Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն:

Սա չորրորդ հանդիպումն է,.որ տեղի է ունենում Ռուս Ուղղափառ Եկեղեցու առաջնորդի նախագահությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդի մասնակցությամբ:

Այս տարվա նոյեմբերյան հանդիպումը տեղի ունեցավ ղարաբաղյան հակամարտության որակական մի նոր փուլում: Այն ողջունում է կողմերի միջև սկսված ուղիղ բանակցություններն այն համոզմունքով, որ ի վերջո կգտնվի փոխադարձաբար ընդունելի հաշտության տարբերակը: Երեք հովվապետերը կրկին հավաստեցին բոլոր խաղաղարար ուժերին խոսքով և գործով իրենց աջակցությունը ցուցաբերելու մասին: Հանդիպման արդյունքում ընդունվեցին Համատեղ հռչակագիր և դիմում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին:

Ադրբեջանական քաղաքական շրջանակները մինչ այսօր շարունակում են շահարկել այն պնդումը, թե հոգևոր պետերի նախորդ հանդիպումներից հետո Շեյխ-ուլ-իսլամի խնդրանքով մի քանի հայ ռազմագերիներ են ազատ արձակվել, իսկ հայկական կողմը համարժեք քայլեր չի ձեռնարկել: Ի պատասխան այդ պնդումի, Վեհափառ Հայրապետը հավաստեց, որ ազատ արձակված ադրբեջանցի գերիների թիվը կրկնապատիկն է Հայաստան վերադարձած հայ գերիների:

Մոսկովյան վերջին հանդիպման ընթացքում Գարեգին Բ Կաթողիկոսը Շեյխ-ուլ-իսլամին հանձնեց նաև ղարաբաղյան հակամարտության տարիներին անհայտ կորած հարյուրավոր հայ ազատամարտիկների և գերիների անուններ, որ Նորին Սրբությանն էին փոխանցել այս տարի, Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության անդամները, Ղարաբաղ կատարած հովվապետական այցի ընթացքում, Նորին Սրբության աջակցությունն ստանալու խնդրանքով:

Նույն օրը Կրեմլում Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Վ. Պուտինը հանդիպեց Ռուսաստանի հոգևոր առաջնորդների խաղաղարարական եռակողմ հանդիպման մասնակիցների հետ:

Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ-ն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեն հաղորդեցին Վ.Վ. Պուտինին Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված հայ-ադրբեջանական հարաբերություններում ծագած խնդիրների վերաբերյալ եռակողմ բանակցությունների արդյունքների մասին: Բոլոր կողմերը հստակորեն հայտարարել էին, որ անհրաժեշտ է ձգտել որքան հնարավոր է արագ հասնել վիճելի հարցերի խաղաղ կարգավորմանը:

ՌԴ նախագահը բարձր գնահատելով այս հանդիպումը՝ կարևորեց հոգևոր պետերի դերը ձեռք բերված զինադադարի և Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում՝ վստահություն հայտնելով, որ իրենց հեղինակությամբ կկարողանան առաջընթաց ապահովել վերջնական հաշտության ճանապարհին:

Ուղևորության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար և Սանկտ Պետերբուրգի հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը:

Ստորև ներկայացնում ենք համատեղ հռչակագրի և երեք պետությունների նախագահներին ուղղված դիմումի տեքստերը: